№ 173 Սեպտեմբերի 18 (30) 1881 Սեպտեմբերի 18 (30) № 173

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստացարարարացիր գիտում են ազգակ

Տիպաուտ. Ռեդակցիա «Մշակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար գնում են
Իրարանցիր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Թիֆլիսի հնագիտական ժողով· Նամակ Երեւանից· Նամակ խմբագրին· Նամակ խմբագրին· Նամակ խմբագրին· Նամակ խմբագրին· Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Ֆրանսիա· Բուլգարիա· Անգլիա· Նամակ Թուրքիայից։—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՖԼԻՍԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Թիֆլիսի հնագիտական ժողովի նիստերը գրաւեցնում են մեր ամբողջ հասարակութեանը։ Այդ ժողովի գիտական անդամները մեծ ուշադրութեամբ ուսումնասիրում են Կովկասի հնութեան առարկաները, սկսած զանազան արձաններից, մինչեւ Կովկասեան ազգերի բազմաթիւ լինելու պատճառները, նոցա լեզուի լինգվիստական յարաբերութիւնները եւ նշանակութիւնները։ Մանրամասնաբար այդ հետազոտութիւնների հետ աւելի մօտ կը ծանօթանանք այն ժամանակ, երբ որ բոլոր նիստերում կարդացված բեֆերատները կը տպագրվեն եւ այդ կերպով արած հետազոտութիւնները կը դառնան ընդհանուր, ամենին մատչելի սեպհականութիւն։ Իսկ մինչեւ այն ժամանակ չենք կարող ուշադրութիւն չը դարձնել այն գլխաւոր կէտերի վրա, որոնք վերաբերում են մեր ազգութեանը եւ ուրեմն աւելի են շարժում մեր հետաքրքրութիւնը։ Այդ գլխաւոր կէտերից մէկն է պ. Օկրոմշեդլով-Սկրեբրիակովի բեֆերատը, որի նպատակն էր հերքել Մովսէս Խորենացու վկայութիւնը, որ վրաց այբբենը, ինչպէս եւ հայոց, ստեղծված էր Մեսրոբի աշխատութեամբ։ Պ. Օկրոմշեդլովը, ունենալով պրոֆեսորի տիտղոս, ազատ չէ ենթադնցիցից, որը ստիպում է գիտական հետազոտութիւնների մէջ շեղվել ուղիղ ճանապարհից, ստեղծել փաստեր առանց որ եւ իցէ հաստատ եւ ոչոչ ապրբիւրների եւ հերքել այնպիսի փաստերը, որոնց ճշգրտութիւնը արդէն ապացուցված է երեւելի գիտնականների հեղինակութեամբ։

Ցայտնի է, որ արեւելեան պատմագրների շարքում Մովսէս Խորենացու անունը այնքան մեծ է, նոյն իսկ Եւրոպայում, որ նորա պատմութեան մի բառի անդամ անճշգրտութիւնը հաստատելու համար աւելի մեծ եւ հռչակաւոր մարդ է հարկաւոր, քան թէ պրոֆեսոր Օկրոմշեդլովի իր ջրալի ու անհիմն բեֆերատով պ. պրոֆեսորի գլխաւոր փաստը այն է, որ վրաց պատմութեան մէջ, խմբագրված միմիայն անցեալ, XVIII դարում, ասված է, իբր թէ վրաց գրականութիւնը սկսել է իր գոյութիւնը չորս դար գրիգորոսից առաջ, վրաց թագաւորի ժամանակին։ Իսկ ինչ ապրբիւրից են վեր առել այդ տեղեկութիւնը անցեալ դարում վրաց պատմութիւնը խմբագրող հեղինակները, այդ բոլորովին յայտնի չէ, եւ մինչեւ անգամ, ոչ մի նշան կամ արձան չէ գտնված, որ հաստատէր այդ տեղեկութիւնը։ Ծիծաղելի բան կը լինէր, եթէ հարկէ, որ ներկայ դարում մի որ եւ իցէ պատմաբան, գրէր մի պատմութիւն ամենահին դարերի եւ այնպիսի փաստեր մէջ բերէր, որ ոչ մի պատմութեան մէջ չը կան եւ չեն հիմնվում ոչինչ յայտնի ապրբիւրների վրա։ Անցեալ դարու վրաց պատմաբանը կարող էր ասել, որ վրացիք Քրիստոսից առաջ երկաթագրներ ունէին, առանց ցոյց տալու այն ապրբիւրը կամ այն փաստերը, որոնք կարողանային հաստատել այդպիսի մի երեւակայական տեղեկութիւն։ Չենք կամենում յիշել այստեղ վրաց բեֆերատի դատողութիւնները վրաց աւետարանի և քաղաքական լեզուի մասին, կամ այդ վրաց այբբէնի ոչ իբրև հայոց այբբէնից, այլ զենգականից ծագելը։ Այդ բոլորը ինքն ըստ ինքեան անհիմն լինելով և հեռանալ սխալ տեսակէտի,—կազմում են բեֆերատի երկրորդական կէտերը։

Պ. Օկրոմշեդլովին հիմնաւոր կերպով պատասխանեց պ. Երիցեանը։ Նա ասաց, որ Մովսէս Խորենացու պատմութիւնը կարօտ չէ նորա պաշտպանութեանը, յետոյ շատ խելացի կերպով բացատրեց՝ թէ վրաց անցեալ դարու պատմութեան անհիմն լինելը և թէ Խորենացու մեծ հեղինակութիւնը, իբրև ընդունված երեւելի պատմաբանի։

Խորենացին գրել է իր ժամանակակից պատմութիւնը։ Պ. Երիցեանը հաստատում է, որ վրաց այբբէնը մեծ նմանութիւն ունի հայոց այբբէնի հետ թէ արտաքին տեսքով և թէ իր ներքին նշանակութեամբ։ Հաւատալի են նոյնպէս պ. Երիցեանի այն դատողութիւնները, որ Մեսրոբը ոչ թէ յօրինեց նոր հայոց այբբէնը և հետեւապէս վրաց, այլ միմիայն նա կատարելագործեց այդ ալֆավիտը հայոց հին ալֆավիտի հիման վրա, իսկ այդ հին հայոց այբբէնը բ և ե ա գ բ ե ր ն են, որ այդքան մեծ քանակութեամբ պատահում են միմիայն Հայաստանում։ Վրացիք, պ. Երիցեանի կարծիքով, չունեն հին գրականութեան ոչինչ նշաններ, և եթէ ուղիղ լինէր վրաց պատմութեան տեղեկութիւնը և պ. Օկրոմշեդլովի կարծիքը, որ իբր թէ վրացիք ունեցել են գրականութիւն արդէն Քրիստոսից առաջ, Ֆարնազ թագաւորի ժամանակ, անշուշտ պիտի պատահէին վրաց արձաններ նոցա հին գրութիւններով։ Պ. Երիցեանը խոստացաւ ներկայացնել պոլիոգրաֆիական համեմատական աղիւսակներ, որոնցից կերեւայ թէ ինչպիսի մեծ նմանութիւն կայ հայոց և վրաց ալֆավիտների մէջ թէ արտաքին տեսքի և թէ ներքին նշանակութեան կողմից։

Հասարակութիւնը ծափահարութեամբ վարձատրեց պ. Երիցեանի պատասխանը։

Աւելի հետաքրքիրը այն է, որ միւս վրաց գիտնականը, պ. Ցագարելի, հեռաւեալ նիստում, ամսոյ 12-ին, բոլորովին հերքեց պ. Օկրոմշեդլովի բեֆերատի այն մասը, որաեղ վրաց պրոֆեսորը կամենում էր հաստատել, որ իբր թէ վրաց սուրբ գրքերի ալֆավիտը գոյացած է վրաց քաղաքական ալֆավիտից։ պ. Ցագարելի հաստատում է ճիշտ տեղեկութիւններով, որ ընդհակառակը, վրաց քաղաքական ալֆավիտն է գոյացած սուրբ գրքերի ալֆավիտից, հետեւաբար հաստատում է այն՝ որ վրաց սուրբ գրքերի ալֆավիտը ստեղծված է իսկ այդ գրքերի թարգմանութեան համար, ուրեմն այն ժամանակ, երբ վրացիք արդէն ընդունեցին քրիստոնէութիւնը, այսինքն Մեսրոպի ժամանակ։ Ուրեմն միւս վրաց գիտնականը, պ. Ցագարելին, ազատ լինելով անդենցիական ուղղութենից, նոյնպէս հաստատում է Մովսէս Խորենացու պատմութեան ճշդութիւնը, հետեւապէս և այն՝ որ Մեսրոպն է վրաց ալֆավիտի հեղինակը։

Միքայէլ Սաղաթելեան

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 6-ին

Արդէն պարոն Ս. Ս-ի պատասխանը՝ իմ յօդուածի քննութեան մասին, ձգել էի փոստը, երբ ստացայ «Մշակ» 164 համարը եւ, որի մէջ, պ. խմբագիր, նուիրում էք դուք առաջնորդող յօդուածը դարձեալ նոյն յօդուածի քննութեան։

Հաւատի եմ որ «Մեղուն» կը ասէ պ. Ս. Ս-ին պատասխանը, որն ուղարկել եմ նրան։ Իսկ ձեզ խնդրում եմ որ բարեհաճէք իմ այս վերջին պատասխանս էլ ասել, որպէս զի ճշմարտութիւնը վերականգնած լինի։—Ձեր յօդուածից այնպէս է երեւում որպէս թէ ես հակառակ եմ մեր ազգրոցների մէջ արհեստ մտցնելու գաղափարին։ այն ինչ ես համակրելով այդ գաղափարին, ցանկացել եմ միայն իմանալ թէ ինչ միջոցներով կարելի էր իրականացնել ենթադրեալ գաղափարը։

Առաջին՝ ես ցանկացել եմ իմանալ թէ ով պիտի տայ մեզի իրաւունք մեր հոգեւոր դպրոցների մէջ արհեստական մասն բանալու։ Երկրորդ՝ աչքի առաջ ունենալով մեր դպրոցների այժմեան աղբիւրները՝ հասել եմ այն եզրակացութեան, որ եթէ ուրիշ աղբիւրներ չը ճարվեն արհեստի համար, այն ժամանակ հարկ պիտի լինի ներկայս, առանց այն էլ, համառօտ ծրագիրը կրկին համառօտել և այդպիսով հոգեւոր դպրոցները իջեցնել ծխական դպրոցի աստիճանին։ ուստի և հարցրել եմ թէ ցանկալի է սա արդեօք։ Երրորդ՝ հարցրել եմ թէ որտեղից կարելի էր վարպետներ ճարել մեր ունեցած միջոցներով։ արդեօք արժէր մեր եղած վարպետներին հրաւիրել ուսուցչ իրանց գիտեցած արհեստներին սովորեցնելու։ քանի որ իրանք ես մի օրինաւոր բան չը գիտեն։ Իմ ցանկութիւնն է եղել այս և այսպիսի հարցերի պատասխանը ստանալ հասարակական կարծիքից և եթէ համոզվի խնդիրը իրագործելուն, ապա սկսեմ պրօպագանդա։ Բայց մինչեւ հիմայ որոշ պատասխան չը լսեցի լրագրութեան կողմից և դարձեալ սպասում եմ—

Գալով «ուս լեզուի մասին գրածիս քննութեանը՝ ցաւելով պիտի ասեմ որ՝ խմբագրութիւնդ այնպիսի եզրակացութիւնների է եկել, որոնց մասին ես բնաւ չեմ էլ մտածած։

Վերջին ժամանակներումս «Մշակը» և «Մեղուն» տպելով մի շարք գանգատների, որոնք վերաբերում էին մեր ժողովրդի զէպի ազգային դպրոցներն ունեցած անտարբերութեանը, եկել էին զանազան եզրակացութեան։ «Մեղուն» ասում էր՝ ժողովրդի անտարբերութեան պատճառը դպրոցների ուսուցիչները. տեսուչները և հոգաբարձութիւնները են...։ «Մշակն» ասում էր որ՝ ազգային դպրոցները ժողովրդի զաւակներին տալիս են լոկ վերացական կրթութիւն, որում աւարտողը չէ կարող ապագայում իր փորը կըշտացնել. այդ պատճառով էլ անտարբեր է ժողովուրդը...։ Ասողներ էլ եղան թէ ազգային ուսումնարանները չեն տալիս աւարտողներին արտօնութիւններ, իրաւունքներ, գիտութիւն և գիրութիւն արքունի դպրոցները մտնելու և մինչեւ իսկ հայոց լեզուն ես չեն սորվեցնում, այնքան որ կարողանայ աւարտողը մի քանի տող բան գրել անսխալ։—

Մի կողմից ուշադիր լինելով այդ ենթադրութիւններին և միւս կողմից յենլով եմ անձնական փորձերին, եկայ այն եզրակացութեան, որ մեր ժողովրդի զէպի ազգային դպրոցներն ունեցած տրամադրութիւնների մէջ գլխաւոր տեղը գրաւում է «ուս լեզուին վերաբերեալը։ Թէ տեսաւորը, թէ վաճառականը, թէ հոգեւորականը և թէ ազնուականը՝ բոլորն էլ պահանջում են որ իրանց որդիներին «ուս լեզուն այն չափով աւանդվի, որ նոքա իրանց դասընթացն աւարտելուց յետոյ կարողանան հասկացնել իրանց միտքը թէ գրաւոր և թէ բանաւոր։

Ժողովրդի այդ ձգտումներին բաւականութիւն տալու համար զանազան դպրոցների վարչութիւններ աշխատել են մտցնել մեր դպրոցների մէջ «ուս վարժարաններ և վարժուհիներ, մինչեւ անգամ մի քանի դպրոցներում ընդունված են եղել այդպիսիները, բայց չուտով հասկացել են յիշեալ դպրոցների վարչութիւնները իրանց ըմբռնումները։ Ուրիշ տեղերում էլ աշխատել են առարկաներից մի քանիսը «ուս լեզուով աւանդել. այդ ես չէ յաջողվել։ Այս բոլորն ի նկատի առնելով, ես ասել եմ որ եթէ օրական մի ժամ տրվի «ուս լեզուին մեր միջնակարգ դպրոցներում, որոնց դասընթացը տեւում է վեց տարի, աւարտող աշակերտը մի այնպիսի պաշար դաս կը ունի իր հետ, որով կարող է իր միտքը հասկացնել ուրիշին թէ գրաւոր և թէ բանաւոր։

Այս նպատակին հասնելու համար իմ ենթադրած միջոցը թէ «Մշակը» և թէ «Մեղուն» անիրագործելի և չափազանց են համարում։ Եթէ չափազանց է իմ ենթադրած միջոցը՝ կարելի է չափազանցել։ Հարցը նրանում է իսկապես թէ՝ «ուս լեզուի զօրեղացնելը մեր դպրոցներում ինչ հեռանաք կունենայ։ Ես համոզված եմ որ եթէ մեր դպրոցներում (միմիայն միջնակարգ դպրոցներում), հնար լինէր պրոգիմնազիաների մէջ աւանդածի չափով աւանդել «ուս լեզուն, այն ժամանակ 1. արքունի սարակարգ դպրոցները գնացող հայ ազնիկների և ազատների մեծ մասը կը վերադառնար դէպի մեր դպրոցները։ 2. այդ վերադարձող հայ մանկտիները կը կրթվեին ազգային հոգով, կուսանէին իրանց մայրենի լեզուն, կրօնը, պատմութիւնը և գրականութիւնը։ 3. Ժողովրդի ձգտումներին բաւականութիւն տալով, կը գրաւէինք նրա համակրութիւնը և սրանով կապանոթէինք մեր դպրոցների յարատեւութիւնը նիւթական և բարոյական։ 4. Մեր դպրոցներից աւարտողները, բացի այն որ ազգային ոգով կը կրթվէին և ազգային լեզուով հիմնաւորապէս, գիտակցաբար կը սեփականէին իրանց հանրակրթական առարկաները՝ ձեռք կը բերէին նոյնպէս բաւարար հմտութիւն «ուս լեզուի, որով աւելի հարթած կը լինէինք աւարտող պատանիների ինքնուրոյն զարգացման ուղին։ 5. Այդպիսիներից միայն կարող էինք սպասել Ազգանուանցներ, Ղուկասեանցներ, Տէր-Ղևոնդեանցներ, Նազարեանցներ, Շաբուհազարեանցներ, Ալաբելեանցներ և այլն, որոնք հայկական լեզուի հմտութեան հետ ունենալով իրանց ձեռքում հենց «ուս լեզուի հմտութիւնը, մեծամեծ ծառայութիւններ արին մեր դպրոցական յառաջադիմութեանը։—

Վերջապէս ես ինքս էլ մի հատարակ գիւղացու որդի եմ և ուսել եմ մի քանի լեզուներ, բայց ես երբ աչքից ձգեցի իմ ազգային լեզուով հրատարակված լրագիրը, օրագրերն ու գրքերը, ես չեմ կարծում որ իմ պաշարն է սակաւում ինձ կարդալ իմ լեզուով հրատարակված գրքերը,